«Առաջադրվող հանգամանքները», ինչպես և ինը «Եթե իրոք»-ը. ենթադրություններ են, «երեակայության հորինվածք» Գրանք նույն ծագումն ունեն. «Առաջադրվող հանգամանքները» նույն է, ինչ «Եթե իրոք»-ը, իսկ «Եթե իրոք»-ը նույնը, ինչ «առաջադրվող հանգամանքները» Մեկը նորադրություն է («Եթե իրոք»), մյուսը՝ նրա լրացումը («առաջադրվող հանգամանքները») Մեջում «Եթե իրոք»-ից է ոկտում ստեղծագործությունը, իսկ «առաջադրվող հանգամանքները» կարգանում են այն Մեկն առանց մյուսի շիկարող գոյություն ունենալ և անհրաժեշտ հարուցիչ ուժ ստանալ: Սակայն փոքր-ինչ տարբեր են դրանց գործառությունները. «Եթե իրոք»-ը խթանում է նիրեակ երևակայությունը, իսկ «առաջադրվող հանգամանքները» հիմնավորում են «Եթե իրոք»-ը: Գրանք միասին ու զատ-զատ նպատակում են ներքին տեղաշարժի ստեղծմանը:

- Իսկ ի՞նչ բան է «կրբերի ճշմարտացիությունը»,- հետաքրքրվեց Վոլոնցով:

- Կրբերի ճշմարտացիությունը նույն ինը կրբերի ճշմարտացիությունն է, այսինքն, ինց իր՝ արտիստի ճշմարտ, կենդանի մարդկային կրբերը, զգացմունքները, ապրումները:

- Իսկ ի՞նչ է «ապրումների ճշմարտանմանությունը»,- պոկ չեր գալիս Վոլոնցով:

- Դա ոչ թե իսկական կրբերը, զգացմունքներն ու ապրումներն են, այլ, այսպիսի ասած, դրանց կանխազգացումը, դրանց մոտիկ, հարապատ կացությունը, որը նման է ճշմարտությանը և դրա համար էլ ճշմարտանման է: Դա կրբերի հաղորդումն է, բայց ոչ թե ուղղակի, անմիջական, ենթագիտակայական, այլ այսպիսի ասած, զգացմունքի ներքին հուշարձությամբ:

Բայց ինչ վերաբերում է Պուշկինի ասույթին՝ տմբողջությամբ առած, ապա դուք անհամենառ ավելի հեշտ կիսականար, եթե նախադասության բառերը վերադասարկորեք և առեր այսպիս։

«Առաջադրվող հանգամանքներում՝ կրբերի ճշմարտացիությունը»: Այլ կերպ ասած, նախ առաջադրվող հանգամանքներ ստեղծեք, անկեղծորեն հագատացեք դրանց, և այսինքն ինքնարտինյան կօնվի «կրբերի ճշմարտացիությունը»:

«Առաջ... դըր... գող... հան... գա... մանք... նե... րում...»,- տրնում էր հականալ Վոլոնցովը:

Արկադի Նիկոլաևիչը նրան օգնության շտապեց.

- Գործնականում ձեր առջև կծառանա մոտավորապիս այսպիսի մի ծրագիր. նախ դուք պարտավոր եք յուրամի պատկերացնել բոլոր «առաջադրվող հանգամանքները»՝ արտածված բուն պիեսից, ոճմտորական բնմադրությունից, սեփական արտիստական անքաշանքներից: Այդ ամբողջ կյութը ըստ հանուր պատկերացում կտա մարմնավորող կերպարի կյանքի մասին՝ նրան շրջապատող պայմաններում... Հարկավոր է անկեղծորեն հագատալ նման կյանքի հավանականությանը բուն իրականության մեջ հարկավոր է դրան ըստելանալ այն աստիճան, որ մերևս այդ օտար կյանքին. Եթե այդ ամենը հաջողի, ապա ձեր ներաշնարհում ինքնարեարար կտեղծվի կրբերի ճշմարտացիությունը կտմ զգացմունքների ճշմարտանմանությունը:

- Ցանկալի կիներ ձեզնից ավելի կոնկրետ, գործնական ինչ-որ հնարք ստանալ,- ձեռք չեմ բաշում եմ:

- Վերցրեք ձեր սիրած «Եթե իրոք»-ն ու դրեք ձեր հավաքած «առաջադրվող հանգամանքներից» յուրաքանչյուրի առաջ Շնորհում ինչներդ ձեզ տասցեք՝ եթե իրոք ներխուժալով խելացար լինեք, եթե իրոք աշակերտները լինեն Մալուխուլովայի մոտ ընակարաւանմուտի երեկոյցին, եթե իրոք դուն փականը դշացած լինեք ու չփակենք, եթե իրոք ստիպված լինենք պատնիշել այն և այլն, ապա ի՞նչ կանեմ ես և ինչպես կվարվեմ:

Այդ հարցն անմիջապես ակտոիվություն կարթացնի ձեր մեջ՝ գործողությամբ պատասխանեալ երան, առացեք. «Ա թե ինչ կանեմ»: Եվ արեք այն, ինչը կուտեսար, ինչի մղում կամ ցանկություն կունենար՝ առանց գործելու պահին մտորելու:

Այստեղ դուք ներքնապես (ենթագիտակայարար կամ գիտակցարար) կզգար այս, ինչը Պուշկին անվանում է «կրբերի ճշմարտացիություն» կամ ծայրահեղ դեպքում «ապրումների ճշմարտանմանություն»: Այդ պրոցեսի գաղտնիքն այն է, որպեսի ամեններն չընանաս զգացմունքների վրա. առնեն ինչ թողնեն իրեն, չտածեն «կրբերի ճշմարտացիության» մասին, բանի որ այդ «կրբերը» մնապնից չեն կախված, այլ իրենք իրենցից են բխում: Դրանք ոչ հրամանի են ենթարկվում, ոչ էլ բռնության:

Թող արտիստի ամրող ուշագրությունը կենսորունանա «առաջադրվող հանգամանքների» վրա: Եթե դրանցով անկեղծորեն ապրեք, ապա ձեզ ինքնարեարար կստեղծվի նաև «կրբերի ճշմարտացիությունը»:

Եթե Արկադի Նիկոլաևիչը բացատրում էր, թե ինչպես է ենդինակի, դերսանի, ոճմտորի, նկարչի, էլեկտրոստենինիկի ու ներկայացման մյուս ստեղծողների ամենատարեք «առաջադրվող հանգամանքներից» ու «Եթե իրոք»-ներից բեմում ձեռագրություն կենդանի կյանքին նույնուղ մքնուրու, Գովորիմվու վրդովկեց ու «պաշտպան կանգնեց» արտիստին:

- Սակայն, ներեցեք ինդորեմ,- բողոքեց նա,- եթե ամեն ինչ ուրիշներն են ստեղծում, ապա էլ ինչ է մնում դերասանին: Դատարկ բանն է:

- Ինչպես թե՝ դատարկ բանն, - վրա տվեց Տորոցվեց: Ուրիշի կորինական հավատան ու անկեղծորեն վերապերել ձեր կարծիքով դատարկ բանն՝ են: Բայց դուք գիտե՞ք, որ ուրիշի թեմայով այդ կերպ ստեղծագործելու հաճախ ավելի դժվար է, քան սեփական հորինվածքը ստեղծելը: Մենք հայտնի են դեպքեր, երբ գրողի վատ պիեսը համաշխարհային հոչակ է ձեռք բերել շնորհիկ մեծ արտիստի վերտանդման: Մենք գիտենք, որ Շերսպիրը ուրիշի նույնինը է վերտանդել: Մենք էլ բատերագիրների երկերն ենք վերստեղծում, մենք բացում ենք դրանց բառերի տակ թարևսած իմաստը. մենք ուրիշի տերստի մեջ մեր ենթատերսուն ենք դնում, մեր վերաբերումներն ենք սահմանում մարդկանց ու նրանց կյանքի պայմանների նկատմամբ. մենք մեր ներքնաշխարհու ենք անցկացնում հեղինակից ու ոճմտորից ստացած ամբողջ այլությունը. մենք մեր մեջ նորից վերաբերում ենք այն այլն, ինդանացնում ու լուսացնում մեր երևակապնի պարագաները. Մենք հարապատանում ենք նրան, հոգերանորեն ու ֆիզիկապնի մերգում նրան. մենք սերմանում ենք մեր մեջ կրբերի ճշմարտացիությունը կտմ զգացմունքների ճշմարտանմանությունը:

ծագործության վիրշնական արդյունքում ստեղծվում է պիեսի նվիրական մտահացման հետ սերտորեն կապված, ճշմարտափս արդյունավետ գործողությունը. մենք կնուրանք, տիպական կերպարներ ենք կերտում՝ ներկայացվող անձի կրքորով ու զգացմունքներով: Եվ այս ահոնի աշխատանքը «դատարկ բան» է: Ոչ, դա մեծ արարում է ու ճշմարիտ արվեստ, - իր խոսքը երրափակեց Արկադի Նիկոլաևիքը:



Դասարան մտնելով, Արկադի Նիկոլաևիքը մեզ հայտնեց դասի ծրագիրը: Նա ասաց:

- «Եթե իրոք»-ից ու «առաջադրվող հանգամանքներ»-ից հետո մենք այսօր կիսուներ ներքին ու արտաքին բնմական գործողության մասին:

Դուք հասկանո՞ւմ եք, արդյոք, թե դև ինչ նշանակություն ունի մեր արվեստի համար, որն ինքնին, իր բնույթով հիմնված է ակտիվության վրա:

Այդ ակտիվությունը բնմում դրսուրվում է գործողության միջոցով, իսկ գործողությամբ հաղորդվում է դերի ոգին՝ թե՛ արտիստի ապրումները և թե՛ պիեսի ներքին աշխարհը. գործողություններով ու արարքներով մենք դասում ենք բնմում ներկայացվող մարդկանց մասին և հասկանում, թե ովքեր են նրանք:

Շահ թե ինչ է տալիս մենք գործողությունը, և ահա թե ինչ է սպասում նրանից հանդիսականը:

Խոչ ի՞նչ է մեծ մասամբ նաև մեզանից ստանում: Նախ և առաջ՝ մեծ իրարանցում, անզուսազ շարժումների առատություն, նյարդային, մերժական տեղաշարժեր: Այս ամենով բնմում մենք անհամենատ ավելի շռայլ ենք, քան իրական կյանքում:

Սակայն բայց այս դերասանական գործողությունները բռնորովին այլ են, քան մարդկայինը, իսկական կյանքում: Տարբերությունը ցույց տամ օրինակով երբ մարդ ուզում է զլուխ հանել կարնոր, նվիրական, խիստ անձնական մտորումներից ու ապրումներից (ինչպիսի Համեմատի «Լինել, թե չլինել»), նաև մեկուսանում է, ինքն իր մեջ խորանում և աշխատում մտովի բառերով արտահայտել այն, ինչիք մասին մտածում է և ինչը զգում:

Քենում է դերասանները գործում են այլ կերպ: Նրանք կյանքի ներանձնական մտերմիկ պահերին գալիս են ուղղակի նախարեմ, դիմում հանդիսականին և բարձրածայն, ցցուն ու պաթոսով ճամարտակում իրենց՝ գոյություն չունեցող ապրումների մասին:

- Ի՞նչ է նշանակում, ասացներ ինդեմ, «ճամարտակում են իրենց՝ գոյություն չունեցող ապրումների մասին»:

- Դա նշանակում է՝ անում են այն, ինչը որ դուք, երբ ուզում եք արտաքին, ցցուն դերասանական գերխաղով (րացնել ձեր խաղի ներքին, հոգեկան դատարկությունը:

Երբ դերը չեն զգում ներքնափես, ավելի շահեկան է հանդիսականին մատուցել արտաքնապես ցցուն, ծափահարությունների սպասումով: Սակայն հապիվ թե լուրջ արտիստը քատերային աղմուկ ակնկալի այնտեղ, ուր ինքն ամենաթանկ մտքերը, զգացմունքները, նվիրական հոգենոր էութ-

յունն է հաղորդում: Զե՞ որ դրանց մեջ պահված են նաև իր՝ դերասանի անձնական, դերին համարունչ ապրումները: Դրանք ուզում են հաղորդելու ոչ թե ծափահարությունների իժանագին շաշունի ներքը, այլ ընդհակառակը, ներքուն լուրջան մեջ, մտերմիկ խստովանության պես: Բայց եթե արտիստը գոհաբերում է այս ամենը և չի երկնչում հանդիսավոր պահը գոնեկացնելուց, ապա դա վկայում է, որ դերի արտաքրեվող խոսքերը փուչ են իր համար, որ նա դրանց մեջ իր իդումից ոչ մի թանգ նվիրական բան չի գրել: Դատարկ բառերի նկատմամբ փառ վերաբերմունք չի կարող լինել: Դրանք պետք են միայն որպես հնչյուններ, որոնցով կարելի է ցուցադրել ձայն, առողանություն, խոսքի տեխնիկա, դերասանական, կենդանական տեմպերամենություն: Խոչ ինչ վերաբերում է բուն մտքերին ու ապրումներին, հանուն որոնց պիճուր գրվել է, ապա այդ ամենը նմանատիպ խաղով հնարավոր կիմի հաղորդել միայն «ընդհանրապես» տիտոր, «ընդհանրապես» ուրախ, «ընդհանրապես» ողբերգական, անհուսալի և այլն: Նման հաղորդումը մեռած է, ձևական, արհեստավորական:

Արտաքին գործողության ոլորտում ես տեղի է ունենում նույնը, ինչ որ ներքին գործողությունում (խոպօւմ): Երբ դերասանն ինքը, որպես մարդ, անտարերե է անվիրի նկատմամբ, երբ դերն ու արվեստը չեն տրվում նրան, ինչին կոչված են ծառապել, ապա գործողություններն էլ լինում են դատարկ, չափաված և, ըստ էության, հաղորդելու ոչինչ չունեն: Այդ դեպքում այլ ելք չի մնում, քան «ընդհանրապես» գործելը: Երբ դերասանը տառապում է տառապելու համար, երբ նա սիրում է սիրելու համար, խանդում է կամ ներումն աղերսում խանդելու և ներում աղերսելու համար, երբ այդ ամենն արփում է սուզ այն պատճառով, որ այդպես է գրված պիեսում, այլ ոչ թե որ այդպես է վերաբերվել հոգեպես և այդպես է ստեղծվել դերի կյանքը բնմում, ապա դերասանին այլ բան չի մնում, և «ընդհանրապես խաղը» նրա միակ ելքն է նման դեպքերում:

Ի՞նչ ահավոր բան է այդ «ընդհանրապես»-ը:

Որչափ անփութություն, խառնաշփոթ, անհեթերություն ու անկարգություն կամ դրա մեջ:

Ուզո՞ւմ եք որևէ բան ուտել «ընդհանրապես»: Ուզո՞ւմ եք «ընդհանրապես» խոսել, կարդալ: Ուզո՞ւմ եք «ընդհանրապես» ուրախանալ:

Ի՞նչ տաղտուկ, դատարկություն է բուրում նման նախադասություններից:

Երբ արտիստի խաղը գնահատում են «ընդհանրապես» բառով, օրինակ՝ «Այսինչ արտիստը Համեմատի դերը «ընդհանրապես» վատ չխաղաց». նման գնահատականը վիրավորական է դերակատարի համար:

Փորձեք տեմնեմ «ընդհանրապես» մեր, խանդ, ատելություն խաղալ:

Դա ի՞նչ է նշանակում: Այդ կրքերի ու դրանց բաղադրատարերի խառնարգո՞շ խաղալ: Սահ հնաց դա, կրքերի, զգացմունքների, մտքերի, գործողությունների տրամարանության, կերպարների շիշափորն են բնմից մեզ երացնում «ընդհանրապես» դերասանները:

Ամենից զափիշտապին այն է, որ նրանք անկենծորեն են հուզվում և ուժգություն զգում իրենց «ընդհանրապես» խաղը: Դուք նրանց չեք համոզի, թե

ադր խաղում չկան ոչ կիրք, ոչ տայրումներ, ոչ միտք, այլ կը միայն դրանց խառնաբրդող Այդ դերասանները քրտնում են, անհանգուստնում, տարգում է խաղով, չայած չեն հաւանում, թե ինչն է իրենց հուզում կամ գրափում: Դա ենց այն «դերասանական հույս» է, այն աղմկարարությունը, որոնց մասին խոսել եմ արդին: Դա «Ընդհանրապես» հուզունքն է:

Ճշմարիտ արվեստն ու «Ընդհանրապես» խաղը անհամատնելի են: Մենք ոչնչացնում ենք մյուսին: Արվեստը կարգ ու ներդաշնակություն է սիրում, իսկ «Ընդհանրապես»-ը՝ անկարգություն ու բառա:

Ինչպես պահպանեմ ձեզ մեր երդվալ թշնամի «Ընդհանրապես»-ից:

Սրա դեմ պայքարելու միջոցն այն է, որ անկազմակերպ «Ընդհանրապես» խաղի մեջ ներքերի ենց այն, ինչը հատկանշական չէ նրա համար և ոչնչացնում է նրան:

«Ընդհանրապես»-ը մակերեսային է ու թեթևամիտ: Ուստի ձեր խաղի մեջ ու քեմում կատարվող գործողություն ներքի նկատմամբ ավելի շատ պլանավորվածություն և լուրջ վերաբերմունք ներմուծեք: Դա լրջնացնի են մակերեսայությունը, եւ թեթևամությունը:

«Ընդհանրապես»-ը քառասային է, անհմասա: Դերի մեջ տրամարանություն և հետեւղականություն մոտցեք, և դա դուք կմղի «Ընդհանրապես»-ի վնասակար հատկանշենքը:

«Ընդհանրապես»-ը ամեն ինչ սկսում և ոչինչ չի ավարտում: Ավարտունություն մոտցեք ձեր խաղի մեջ:

Այս ամենն էլ ենց մենք պիտի անենք, միայն թե սիստեմի ողջ դասընթացի, նրա ուսումնամիջման ընթացրում, որպեսի իրը վերջնական արդյունք «Ընդհանրապես» գործողության վիճակըն քեմում մեկնադիմաց մշակվի ճշմարիտ, արդյունավետ ու նպատակամ մարդկային գործողությունը:

Միայն սա եմ ես ընդունում արվեստում, միայն սա եմ պաշտպանում ու իմ մեջ զարգացնում:

Ինչի՞ համար եմ ես այսպիս դաժան «Ընդհանրապես»-ի նկատմամբ Ահա թե ինչու:

Հա՛տ ներկայացումներ են ամեն օր ամբողջ աշխարհում խաղացվում ներքին էությանը հետևելով, ինչը ճշմարիտ արվեստն է պահանջում: Տասկանը:

Հա՛տ ներկայացումներ են ամեն օր ամբողջ աշխարհում խաղացվում ոչ թե ըստ էության, այլ «Ընդհանրապես»-ի պկրունքի: Տասկան հազարներ: Ուստի մի զարմացեք, եթե ասեմ, որ ամեն օր ամբողջ աշխարհում հարյուր հազարավոր դերասաններ են ներքնապես խեղին, պարերար իրենց մեջ սիսալ, վնասակար բնական ու անկություններ արմատափրելով: Դա առավել ես սարսափելի է, քանի որ, մի կողմից, ինքը՝ քատրոն ու նրա ստեղծագործական պայմաններն են դերասաններին արամադրում և ձգում դեսի վնասակար սովորություններ: Սյուս կողմից էլ՝ դերասանը, նվազագույն դիմադրության ուղին փնտրելով, սիրով է օգտվում այդ արհեստական «Ընդհանրապես»-ից:

Վնասի տարբեր կողմներից, աստիճանաբար, հետեւղականորեն տգետ-

ները դերասանը արվեստը տանում են դեսի կործանում, այսինքն՝ տուղծագործության էու թյան ոչնչացում, օգուտ «ընդհանրապես» խաղի վատ, պայմանական արտարին ձեր:

Ինչպիս տեսնում եք, առաջիկայում մենք պետք է պայքարենք ամբողջ աշխարիի դեմ, հանրային նվազյաների պայմանների, դերասանի դաստիարակման մեթոդների և, մասնավորապես, բնական գործողության վարերող՝ արդ են կարունացած կեղծ ըմբռումների դեմ:

Մեզ պապադ բոլոր դժվարություններից գլուխ հանելու համար նախ և առաջ պեսոր է խիստավուրյուն ունենանք ընդունելու, որ թե դուրս գալիս, հանդիսականների առջև ներւյալ պայմաններում շատ ու շատ պատճառներով մենք թարորնում, թեմի վրա կատարելապես կորցնում ենք իրական կանքի զգացողությունը: Մենք մոռանում ենք ամեն ինչ՝ և այն, թե ինչպիս ենք կանում քայլում, և թե ինչպիս ենք նառում, ու տում, իմում, ընում, իսում, նայում, լաւում, մի ինսուզ թե ինչպիս ենք կանում ներքնապես ու արտարնապես գործում: Մենք պետք է այս ամենը նորից տվարենք բնահարթակի վրա, ճիշտ այնպիս, ինչպիս նրեին է տվարում քայլել, խոսել, նայել, լսել:

Մեր դպրոցական պարագաներից ընթացրում են սոտիպված կինենմայստումների ու կարելոր եղբակացության մասին հաճախ իհշեցնել: Բայց առայժմ փորձենք հաւականալ, թե ինչպիս սովորենք բնմում գործել ոչ թե դերասանավարի՝ «Ընդհանրապես», այլ մարդկայնորեն՝ պարզ, ընական, օրգանական ճիշտ, պատճ, ինչը որ պահանջում են ոչ թե թատրոնի պայմանականությունները:

- Մի խորով, սովորենք թատրոնից վարերել թատրոնը, - ավելացրեց Գովորիվը:

- Այդ է, որ կա, ինչպիս Թատրոնից (մեծատառով) վարերել թատրոնը (փորբառառով):

Այդ խորիք միանգամից կատարել հնարավոր չէ, այլ միայն՝ աստիճանաբար, արտիստական աճի և հոգեստիմնիկայի տիրապետումն ընթացրում:

- Միշ այդ, խորում եմ քեզ, Վասիլ, - դիմեց Արվադի Նիկոլաևիչը Ռամանստիլին, համարական աճի և հոգեստիմնիկային ու բնակ ձևանան գործող: Այդ պատճառով էլ, ենց նկատեն, որ հակիմում են դեսի խաղը կամ, առավել են, կատարատինը, անմիշապես կանգնեցրու նրանց: Եթե ք դասարանի հարցը կարգավորվի (ևս շտապեցնում եմ այդ գործը), հատուկ վարժություններ մշակիր, որոնք սովորեն նրանց ինչ գնով էլ լինի գործել թեմի վրա: Հաճախակի ու տեսական, օր-օրի այդ վարժություններն արագ առավել աստիճանաբար, մեթոդապես ընտելացնես նրանց ճշմարիտ, արդյունավետ ու նպատակային բնական գործողության: Ըստ մարդկային ակտիվություններ նրանց պատկերացման մեջ մերժի այն հոգենիմակալի հետ, որը համարում է նրանց բնմում, հանդիսանի ստեղծագործության դասի վայականական ակտիվ լինել բնմում, դու նրանց մեջ լավ տվարույթ կրատափառական լինել արվեստում բնական մարդ, այլ ոչ թե խամաճիկ:

- Իսկ ի՞նչ վարժություններով: Սառմ եմ՝ ի՞նչ վարժություններով:
- Դասի մքնուրուց պետք է լինի առավելապես լուրջ ու խիստ, որպես զի խաղաղողները ձգվեն, ինչպես ներկայացման ժամանակ Դա դու կարող ես:

- Շատ բարի, - ընդունեց Ռախմանովը:

- Մեկ առ մեկ բեմ կանչիր ու որևէ գործ առաջարկիր:

- Իսկ ի՞նչ գործ:

- Թեկուզ, օրինակ, թերթն աշխի անցկացնել ու պատմել, թե ինչ է այսուղ գոված:

- Մասսայական դասի համար երկար կտոնի: Պետք է բոլորն անցնեն:

-Հոք քանն այն չէ, որ ամքող բերքի բովանդակությունն իմաստանք: Կարենը ճշմարիտ, արդյունավետ ու նպատակամետ գործողության հասնելն է: Եթե տեսնես, որ այն ատեղծվել է, որ աշակերտը տարվել է գործով, որ հանրային դասի պայմանները նրան չեն խանգարում, հաջորդին կամչիր, ինչ առաջինին ինչ-որ տեղ, բեմի խորըն ուղարկիր: Ըստ այսուղ ինքնիրեն վարժմի և կենական, մարդկային գործողությունների ու նակություն ձեռք բերի բեմի համար: Որպեսզի դա մշակվի ու ընդմիջությամբ արմտուափորվի, անհրաժեշտ է բեմի վրա ինչ-որ տեսական, որոշակի ժամանակով ճշմարիտ, արդյունավետ ու նպատակամետ գործողությամբ ապրել: Դեռ, ուրիմն, դու էլ օգնիր նրանց՝ սուանալու այդ որոշակի ժամանակը:

Դասն ավարտենով, Արկադի Ներկուանիչը մեզ բացատրեց.

- «Եթե իրոք»-ը, «առաջադրվող հանգամանքներ»-ը, ներքին ու արտաքին գործողությունները մեր աշխատանքի շատ կարևոր գործուներն են: Բայց միակը չեն: Մեկ դեռ մասնագիտական, արտիստական, ատեղծագործական շատ ու շատ ունակություններ, հատկանիշներ, ձիբքեր են պետք ներևակայություն, ուշադրություն, ճշմարտացիության զգացողություն, խնդիրներ, բնմական տվյալներ և այլն, և այլն»:

Հավիքի քայլության ու հարմարության համար պայմանավորվենք առայժմ դրանք անվանել մեկ բառով՝ **տարբեր**:

- Ինչը՝ տարբեր, - հարցրեց մեկը:

- Առայժմ ես այդ հարցին չեմ պատախանում: Այս ինքնըստինքան կապազի ժամանակին: Այդ տարբերը, և դրանցից առաջին հերքին «Եթե իրոք»-ը, «առաջադրվող հանգամանքներ»-ը և ներքին ու արտաքին գործողությունները դեկամարդու արվածով, դրանք մենքը մյուսի հետ համացցելու, համադրելու, միացնելու ունակությունը մեծ պրակտիկա ու փորձ, հետևաբար նաև ժամանակ են պահանջում: Այս իմաստով լինենք համբաւար և առայժմ մեր ողջ ուշադրությունը կճնորունացնենք այդ տարբերից յուրաքանչյուրի ուստամապերության ու մշակման վրա: Սա է այս տարբա դպրոցական դասընթացի կարենոր ու մեծ նպատակը:

IV. ԵՐԵՎԱԿԱՅԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսօր, Տորոսվի տկարության պատճառով, դասը նշանակվել էր նրա բնակարանում: Արկադի Ներկուանիչը մեզ հարմար տեղափորեց իր աշխատանքայինը:

- Դուք արդեն գիտեք, - ասում էր նա, - որ մեր բնմական աշխատանքը մկանում է պինամի ու դերի մեջ մոգական «Եթե իրոք»-ը ներմուծենով, որն արտիստին առօրյա իրականություն նից երեակայության ուրուղ տեղափոխություն է: Դիենք, դեռք հեղինակի ներևակայության արդյունքն են, նրա հորինած մոգական և այլ կարգի «Եթե իրոք»-ների, «առաջադրվող հանգամանքներ»-ի մի շարան: Բնեում իսկական «ներկություն», ոնայ իրականություն լինել չի կարող. ոնայ իրականությունն արվեստ չէ: Վերջինիս նրա բուն էլերանը համապատասխանող գեղարվեստական հորինվածքըն է հարկավոր, որպիսինն է առաջին հերքին հեղինակի տեղեղագործությունը: Արտիստի ու նրա ստեղծագործական տեխնիկայի խնդիրն է պինամի հորինվածքը բեմական իրողություն դարձնելը: Այս պրոցեսում հակայական դեր է խաղում մեր երևակայությունը: Ուստի արժեն երկար կանգ առնել դրա վրա և դիտարկել դրա դերը ստեղծագործելիք:

Տորոսվի ցույց տվեց պատերին կախված տարբեր ձևավորումների էսքիզները:

- Այս բոլոր նկարներն իմ սիրած երիտասարդ, այժմ հանգույցալ նկարչինն են: Նա շատ տարօրինակ մարդ էր՝ էսքիզներ էր անում դեռ չգրված պինամիների համար: Ան, օրինակ, մասմասից առաջ Անոռն Զիսուլի հեղափած, սակայն չգրած պինամի վերջին գործողության էսքիզը՝ ստույցներին

գերի ընկած գիտարշավախումք, սահմովեցուցիչ ու խստաշունչ հյուսիս: Մեծ շոգենավ՝ լողացող հսկա սառցարենիրների մեջ սեղմված: Սպիտակ ֆոնի վրա չարագուժորին սեին են տալիս մրու խողովակները: Ճճրան սառնամանիք: Ցրտաշունչ քամին երկինք է հանում ձան փաթիլները: Վեր սուրագով՝ դրանք ճերմակ ծածկոց կանանց ձենք են ընդունում: Իսկ այսողի՝ ամուսնու և նրա կոտոց սիրելինի միմանց սեղմված կերպարանը՝ ներ են: Երկուսն ել բողել են ապահով կյանքն ու մեկնել գիտարշավի՝ իրենց սիրային դրաման մոռացության տալու:

Ո՞վ կիավատա, թե այս էսքիզներն արել է մի մարդ, որը երբեք դուրս չի եկել Սովորացից ու կրա մերձակարգից: Բնենային բնապատկերը նա ստեղծել է մեր ձեռնով բնությունը դիտելով. տարրեր մարդկանց վկայություններից, գեղարքնուական գրականությունից, գիտական գրքերից ու լուսանկարներից տեղեկություններ քաղելով: Նկարը ստեղծվել է ամբողջ կյուքի ի մի թերեւու շնորհիվ: Այս աշխատանքում գլխավոր է երբ վերապահել է երեակայությանը:

Տորցով մեկ մոտեցրեց մյուս պատին, որին բնապատկերների մի ամբողջ շարք էր փակցված: Ավելի ճիշտ, քա նույն մոտիվի կրկնությունն էր, թե ինչ-որ ամառանոցային վայր՝ ամեն անգամ նկարչի երեսկայությամբ կերպարանափոխած: Նույն տնակների շարքը տաճուտում՝ տարիս տարրեր եղանակներին և օրվա տարրեր ժամերին, տապին ու բուրքին: Ապա՝ նույն բնակարանը, տակայն հատված անտառով, դրա տեղում փորված լճակներով ու տարրեր ծառատեսակների նոր տնկիներով: Նկարչի համար պարձակի է եղել յուրովի տնօրինել բնությունն ու մարդկանց կյանքը: Նա իր էսքիզներում տներ, քաղաքներ է կառուցել ու քանդել, վերահստակագծել է տեղանքը, սարք շուր տվել:

- Տեսեք, ի՞նչ գեղեցիկ է: Սովորյան Կրեմլը ծովափին, - բացականչեց մեկը:

- Այդ ամենը նույնպիս նկարչի երեսկայության արգասիքն է:

- Սիա և էսքիզներ «միջմոլորակային կյանքին» նվիրված, բայց չգրված պիեսների համար, - մեզ գծանկարների ու ջանկարների նոր շարքի մոտեցնելով՝ ասաց Տորցովը: - Սիա այսակ միջմոլորակային կապի ինչ-որ սարքերի կայան է պատկերված: Տեսնո՞ւմ եք խոշոր պատշգամներով և գեղեցիկ, տարօրինակ ինչ-որ էակներով վիրխարի մետաղյա արկոր: Մեկնակայանն է: Կախված է տարածության մեջ Պատուհաններում մարդիկ են երևում՝ երկրի եկած ուղերքներ են... Անսահման տարածության մեջ երևում է վերև ու ներքի գնացող նույնպիս կայանների գիծը՝ դրանց հավատարակությունը պահպանվում է հայական մագնիսների փոխադարձ գորոդությամբ: Հորիզոնում մի քանի արևներ կամ լուսիններ են Նրանց լույսը ֆանտասիկ էքսկիւներ է ստեղծում, որոնք անհայտ են երկրին: Նման նկար վրձնելու համար պետք է ոչ միայն պարզապես երևակայություն, այլև լավ ֆանտազիա ունենալ:

- Իսկ ի՞նչ տարրերություն կա դրանց միջև, - հարցրեց մեկը:

- Երևակայությունն ստեղծում է այն, ինչը կա, ինչը լինում է, ինչը ճանաչում ենք, իսկ ֆանտազիան՝ այն, ինչը չկա, ինչը իրականում մեր չինք

ճանաչում, ինչը երբեք չի եղիլ ու չի լինի: Բայց գուցի և լինի: Ո՞վ գիտի: Երբ ժողովրդական ֆանտազիան հերթարային թոշող գորգն ստեղծեց, ո՞ւմ մտքով կանչներ, որ մարդիկ անրոպաններով սավառնելու և օգուտ: Ֆանտազիան ամեն ինչ գիտի և ամեն քան կարող է: Ֆանտազիան, ինչպես և երևակայությունը, անհրաժեշտ է արվածագետին:

- Իսկ արտիստին՝, - հարցրեց Շուտովը:

- Իսկ երեակայությունը, ձեր կարծիքով, արտիստի ինչի՞ն է պիետ, - հանդիպական հարց տվեց Արվադի Նիկոլաևիչը:

- Ինչպես թե՝ ինչին է պիետը: Մոգական «երե իրոք»-ը, «առաջադրվող հանգամանքներ»-ը ստեղծելու համար, - պատասխանեց Շուտովը:

- Հեղինակն առանց մեզ արդեն ստեղծել է դրանք: Նրա պիետը հորինվածը է:

Շուտովը լուր էր:

- Արդյո՞ք այն ամենը, ինչ արտիստին անհրաժեշտ է իմանալ պիետի մասին, դրամատորգը տալիս է, - հարցրեց Տորցովը: - Հնարավի՞ր է հարյուր էջի սահմաններում լիավատար բացել գործող անձանց կյանքը: Ձե՞ւ շատ բան մնում է թերապահ: Այ, օրինակ, արդյո՞ք միշտ և բավականաշափ մանրամասն է հեղինակն ատում այն մասին, թե ինչ է եղել մինչև պիետին սկսվելը: Արդյո՞ք պատուի կերպով է ատում այն մասին, թե ինչ է լինելու պիետի պարարտից հետո, թե ինչ է տեղի ունենում կուլիսներում, որտեղից երևում է անում գործող անձը: Դրամատորգը պակավախում է նման ծանրագործություններում: Նրա տերսուում միայն նշվում է՝ «Նույնը և Պետրովը», կամ՝ «Պետրովը գնում է»: Սակայն մենք չենք կարող անորոշ տարածությունից զալ ու այսուղի էլ զնալ՝ շանդարադաշտով այդ տեղաշարժերի նպատակներին: Նման «ընդհանրապես» գործողության հավատալ կարելի է: Մենք գիտենք դրամատուրգների ուրիշ նկարագրումներ և՛ս՝ «Լիր կացավ», «Ծովագծ քայլում է», «Ճիծաղում է», «Ամահանում է»: Մենք տրվում են դերի հակիմք բնութագրումներ, ասենք՝ «Հաճելի արտաքինով նրիտասարդ: Շատ է ծիսում»:

Բայց մի՛թե այսրանք բավական է կերպարի ողջ արտաքինը, շարժութեար, բայլվածը, ուղուրություններն ստեղծելու համար: Իսկ ների տերսուն ու բաւե՛րը: Մի՛թե դրանք պիետ է միայն «Չուր անել» ու արտասանել:

Իսկ բանատեղի բոլոր նշագրումները, իսկ ուժիտորի պահանջները, իսկ նրա միկանացներն ու ամբողջ բնամորությունը պիետ է: Մի՛թե բավական է դրանք միայն մտապահել ու հետո ձեւականորեն կատարել ընտուիլ:

Մի՛թե այդ ամենը հաղորդում է գործող անձի բնավորությունը, որոշում նրա մտքերի, զգացումների, մղումների ու արարքների բոլոր նրենքները:

Ո՞չ այս ամենը պիետ է լրացնի, իրորացնի ինքը՝ արտիստը: Միայն այդ դեպքում հեղինակի ու ներկայացման ստեղծողների ողջ տվածը կկննանանա ու կշարժի բնում ստեղծագործողի ու դահիճից դիտողի հոգու տարրեր ծալքերը: Միայն այդ դեպքում արտիստն ինքը կվարուանա լիարյուն ապրել ներկայացնի անձի ներքին կյանքով ու գործել այնպիս, ինչպես պատմիսում են մեզ հեղինակը, ուժիտորը և մեր սեփական կենդանի զգացողությունը:

Այս ամբողջ աշխատանքում մեր ամենամերձավոր օգնականը երևակայությունն է՝ իր մոգական «երի իրոք»-ով ու «առաջադրվող հանգամանքներով». Երևակայությունը ոչ միայն լրացնում է այն, ինչը լրիվ չեն ասել հեղինակներ, ոճիտությունը է ներկայացման առհասարակ բոլոր ստեղծագործուների աշխատանքը, որոնց ստեղծագործությունը հանդիպահականին է հասնում նախ և առաջ իրենց՝ արտիստների հաջողված խաղող:

Հիմա դուք հասկանո՞ւմ եք, թե որքան կարենոր է, որ արտիստը զրեղ ու վաս երևակայություն ունենա. այն անհրաժեշտ է նրա գնարվեստական աշխատանքի ու բնմական կյանքի բոլոր պահերին, ինչպես դերի ու ալիմ-նասիրության, այնպես և վերադարձման ժամանակ:

Ստեղծագործման ընթացքում երևակայությունը գնում է առջևից և արտիստին տանում իր հուսից:

Դասն ընդհատվեց Սովորված հյուրախաղերի նկած հանրաճանաչ ողբերգակ Ու... ի անսպասելի այցով: Ականավոր արտիստը պատմում էր իր հաջողությունների մասին, իսկ Արևադի Նիկոլաևիչը նրա պատմածը թարգմանում էր ռուսերեն:

Հնասարքի հյուրի միջներուց հետո Տորցովը, երբ նրան ուղիղցեց ու վերադարձավ, ծպալով առաջ մեզ.

- Ինարկե, ողբերգակի չափազանցում է, բայց, ինչպես տեսնում եք, նա ոգևորվող մարդ է և անկեղծորեն հավատում է իր հորինածին: Մենք՝ արտիստներս, այնքան նոր վարժվել բնմում փաստերը երևակայության մանրամասնություններով լրացնել, որ այդ սովորությունը բնմից կյանք նոր տեղափոխում: Այսուեղ դրանք, ինարկե, ավելորդ են, բայց թատրոնում՝ անհրաժեշտ:

Դուք կարծում եք՝ են՛շո՞ւ է այնպիս հորինել, որ ձեզ շու նշները պահած լսեն: Դա նույսնեն ստեղծագործություն է, որը ստացվում է մոգական «երե իրոք»-ով. «առաջադրվող հանգամանքներ»-ով և լավ պարզացած երևակայությամբ:

Հանձարների մասին, երեկի, չի կարելի ասել, յեն ստում են: Նման մարդիկ իրականությանը ուրիշ աշքերով են նախում, ոչ մեզ պես: Երանքը կյանքը տեսնում են ոչ մեզ՝ մահկանացուներիս պես: Կարելի՞ է նրանց մեղադրել, որ երևակայությունը նրանց աշքերին մերք վարդագույն, մերք երկնագույն, մերք մոխրագույն, մերք սև ապակիներ է դուռը: Եվ արդյոք լավ կյանի արվեստ, համար, երե այդ մարդիկ ակնոցը հանեն և ինչպես իրականությունը այնպես էլ գեղարվեստական հորինվածքը սկսն դիտել ոչնչով չփառագուրքած աշքերով. սրափ, տեսնելով սոսկ այն, ինչը տալիս է առօրյան:

Խոստովանեմ ձեզ, որ ես էլ եմ հաճախ ստում, երբ որպես արտիստ կամ ոճիտուր գործ եմ ունենում այնպիսի դերի կամ պինակի հնտ, որն ինձ այնքան էլ չի հլատարում: Նման դեպքերում ես մերում եմ, և իմ ստեղծագործական կարուրությունները շլատվում են: Խրանել է պիտք: Եվ ես սկսում եմ բոլորին համոզել, որ հրապուրված եմ նոր աշխատանքով, նոր պինով, և գովում եմ այն: Դրա համար ստիպված բաներ եմ հորինում, որ չկան

պիեսում: Այս անհրաժեշտությունը մղում է տալիս երևակայությանը. Եթե մնանակ լինեի, այդ բանը չէի անի, բայց ուրիշների ներկայությամբ, կամակամա, ստիպված են որքան հնարավոր է լավ արդարացնել առևտություններ շարութել: Իսկ հետո հաճախ քո խնդիրական հորինվածքն օգտագործում են որպես նյութ դերի ու բնմադրության համար ու ներմուծում պին:

- Եթե երևակայությունն արտիստի համար այդքան կարևոր դեր է խաղում, ապա ի՞նչ պիտի անեն նրանք, ովքեր կուրք են դրանից, - երկան հարցրեց Շուտուովը:

- Պայոր է զարգացնեն կամ բնմից հեռանան: Այլապես դուք այնպիսի ոճիտուրների ձեռքը կը նկնաք: Որոնք ձեզ պակասող երևակայությունը կովունի իրենց երևակայությամբ: Դա մենք համար կնշանակներ սեփական ստեղծագործություններից հրաժարվել: Բնմում խաղավիճուր դառնալ: Ուրիշն ավելի լավ չէ սեփական երևակայությունը նը զարգացնեն:

- Դա, երեկի, շատ դժվար բան է, - հոգոյ հանեցի ես:

- Նայած թե ինչ երևակայություն է: Կա նախաձեռնող երևակայություն, որն ինքնուրույն է գործում: Սա առանց հատուկ ճիշ ու շանր գործարքնուն կազմակերպություն կամ կազմակերպությունը այնպիսի երևակայություն է նոր պարունակություն այն ամենը, ինչ հուշում են, և ապա շարունակում է հուշածն ինքնուրույն զարգացնել: Նման երևակայության ենտ նույնպես համեմատարա ենշտ է գործ ունենալ: Իսկ եթե երևակայությունն ընկալում, բայց չի զարգացնում հուշածը, այդ դեպքում աշխատանքն ավելի դժվար է: Բայց կան մարդիկ, որոնք ոչ իրենք են ստեղծագործում, ոչ էլ տվածն են բմբոնում: Եթե դերասանը ցուցադրվածի միայն արտաքին, ձևական կողմն է բմբոնում, ապա դա երևակայության բացակայության նշան է, իսկ առանց երևակայության արտիստ դառնալ հնարավոր չէ:

Նախաձեռնությամբ, թե՝ առանց նախաձեռնության:

Ընկալում ու զարգացնում է, թե՝ չի ընկալում:

Ան հարցեր, որ ինձ հանգիստ չեն տալիս:

Եթե իրինային թեյի ենտ լուրջուն տիրեց, ևս փակվեցի իմ սենյակում, հարմար տեղափորկեցի բազմացին, շուրջու բարձեր դրեցի, աշքեր փակվեցի և, չսայած հոգնած չէ, սկսեցի երավել: Սակայն առաջն իսկ պահից ուշադրությունս շեղեցին ինչ-որ լուսավոր շրջաններ, տարագույն ցողքեր, որ հայտնվում ու սահում էին մթի մեջ, փակ աշքերիս տառաց:

Լամպը մարեցի՝ ենթադրելով, որ նա է այդ երևակայությունը առաջացնում:

«Իսկ ինչի՝ մասին անքօնմ», - մտմտում էի ինքս ինձ: Սակայն երևակայությունս չէր նիրինում: Պատկերացնում էի սոճու մեծ անտառի ծառերի կատարները, որոնք թեյին բամուր առաջադրված էին:

Հաճելի էր:

Ձարմ օդի շունչ զգացի:

Ինչոք տեղից... լուրջան միշից... ականջիս հասավ ժամացույցի թիկ-քակը...

Ես Անջեցի:

«Դե, իհարկե,- սրափինով որոշեցի ես: -Հո չի կարելի երազել առանց նախաձեռնության: Աերովանով կթօշիս: Անտարի վրայով: Ահա թոշում եմ ծառերի վրայով, դաշտերի, գետերի, բաղարների, գյուղերի... ծառերի կատարների վրայով...»

Նրանք հուշիկ օրորվում են... Զով օդ է վշում և... սոճու բույր... Ձկթկում է ժամացույցը...

Այդ ո՞վ է իմացացնում: Մի՞ թե ինք: Բնի՞ եմ... Վաղո՞ւց... Ճաշասնյակում ավլում էին... կահույք էին տեղաշարժում... Վարագույրների արանքից թափանցում էր վաղորդյան լույսը:

Ժամացույցը խփեց ժամը ութը... Նախաձեռն... ու... թյուն...

19. թ

Իմ շփոքունքը տան անհաջող անրջանքից այնքան մեծ էր, որ չիմացա և այսօր Մալու ետկովայի հյուրասնյակում տեղի ունեցած դասին ամենը պատմեցի Արկադի Նիկոլաևիչին:

«Զեր փորձը չի հաջողվել այն պատճառով, որ դուք մի շարք սխալներ եք թույլ տվել: - Ասաց սա՝ ի պատասխան իմ հաղորդման: - Առաջինն այն է, որ դուք բռնացել եք ձեր երեակայությանը, ֆոխանակ ոգեշնչեք այս: Երկրորդ սխալն այն է, որ դուք անրջել եք «անդեռ ու անառագաստ», նայած թե պատահականությունն ինչպես և ուր կտանի ձիշտ այնպես, ինչպես չի կարելի գործել հենց միայն որևէ գործ անելու համար (գործել՝ հանուն գործելու), այնպես էլ չի կարելի անրջի հանուն անրջելու: Զեր երեակայությունը նպատակ չի ունեցել, ստեղծագործելու համար անհրաժեշտ հետարքիր առաջադրանք երրորդ սխալն այն է, որ ձեր անրջանքը գործուն ու ակտիվ չէր: Մինչեւ, անհրաժեշտության առումով, երեակայական կանքի ակտիվությունը դերասանի համար միանգամայն բացառիկ նշանակություն ունի: Նրա երեակայությունը պիտի է հրահրի ու արթնացնի նարի՝ ներքին, և ապա նաև արտաքին գործողություն:

«Ես գործում էի, քանի որ մտովի կատաղի արագությամբ սպազանում էի անտառների վրայով:

«Մի՞ թե երբ պառկած եք ճեղքընթաց գնացրում, որ նույնպես սուրում է կատաղի արագությամբ, դուք գործում եք, - հարցընքը Տորցովը: - Ծոգիքարշը, մերենավարը՝ ահա թե ովքեր են աշխատում, իսկ ուղևոր պատսիվ է: Ուրիշ բան, երեն գնացը ընթանալիս դուք բռւռն, գործնական խոսակցություն, վեճ վարեիք, կամ զեկուցում գրեիք. այդ դեպքում կարելի էր խոսել աշխատանքի ու գործողության մասին: Նույնը նաև ձեր աերովանով թօշելը: Օդաշուն էր աշխատում, իսկ դուք ոչ մի գործողություն չէիր կատարում:

Այ, եթե ինքներդ գարեիք մերինան կամ եթե տեղանքը լուսանկարեիք, կարելի կիսեր խոսել ակտիվության մասին: Մեզ ոչ թե պասսիվ, այլ ակտիվ երեակայություն է պետք:

- Բայց ինչպե՞ս հարուցել այդ ակտիվությունը, - հարցուի փորձ էր անում Շուառովի:

- Ես կպատմեմ ձեզ իմ վնասմայս պարմուհու սիրած խաղը: Այդ խաղը, որ կոչում է «Թե որ-թե որ», հետեւյալն է, «Ի՞նչ ես անում», - հարցուում է ինձ աղջիկը: «Ձեյ եմ իմունք», - պատասխանում եմ ես: «Բայ եթե դա ոչ թեյ լիներ, այլ լուծողական՝ ինչպիս կիսմեիք: Ես ստիպված փորձում եմ դեղորայքի համբ եիչել: Այն դեպքերում, երբ դա ինձ հաջողվում է, ու ես գեմք ծամածուում եմ, երեան քրջում է սենյակով մենք Հետո նա հարց է տալիս: «Ինչի՞ վրա ես նստած»: «Աթոյին», - պատասխանուում եմ ես: «Բայ եթե դու վառարանի տար-թար սալին սստեիք, ի՞նչ կանեիք: Ստիպված եմ լինում մտովի ինձ նստեցնել տար սալին ու աներևակայիկ ջանքերի գոտի փրկվել այրուցրներից: Երբ դա հաջողվում է՝ աղջիկն ինձ մկուս է խղացը: Նա թափահարում է թաթիկներն ու զոչում: «Չե՛մ ուզում խալալ»: Եվ եթե խաղը շարունակեն՝ կիբրշանա նրանով, որ երեխաւ կախի լաց լինել: Այ, դուք էլ վարժության համար ակտիվ գործողություն հարուցող խաղ մտածեք¹⁸:

- Ինձ թփում է, դա միամիտ, կոպիտ եղանակ է, - նկատեցի ես: - Կուզենայի դրա ավելի նրբին տարբերակը գտնել:

- Մի շտապիկը: Կասոցները: Խոկ առաջմ գոհացեր պարզ ու ամենատարական երազանքներով: Մի շտապիկը շատ բարձր թոշեն, այլ ապրեր մեզ հետ, այստեղ, հոդի վրա, իրական կանքի՝ ձեզ շրջապատող պայմաններում: Թող այս կահույքը, առարկաները, որ զգում ու տեսնում եք, մասնակցեն ձեր աշխատանքին: Այ, օրինակ, ինելագարի Էտյուդը: Այստեղ երեակայության նոր հորինվածքը ներմուծեց մեզ այն ժամանակ շրջապատող իրական կանքների մեջ երոք, այն սենյակը, որտեղ մենք գտնվում էինք, կահույքը, որով մենք պատնշեն էինք դուռը, մի խորպի, ամբողջ առարկայական աշխարհը մնացել էր անձեռնմխելի: Ներմուծվել էր միայն իրականում գործություն չունեցող խելացարի մասին հորինվածքը Խոկ մնացյալ Էտյուդը ունեալ իրողության վրա էր հենվում և օդում չէր կախված:

Համանաւն մի փորձ կատարենք: Մենք իիմ դասի ենք դասարանում: Դա սույուզ իրականություն է: Թող սենյակը, նրա կահավորանքը, դասը, բոլոր աշակերտներն ու դասատուն մասն նույն տեսքով ու նույն վիճակում, ինչ որ եիմ է: «Եթե իրոք»-ի միջոցով ես եիմ ինձ փոխադրում եմ գոյություն չունեցող, կարծեցայ կանքի ոլորտը և այդ նպատակով առաջմ փոխում եմ միայն ժամանակն ու տառւմ: «Հիմա ոչ թե սերեկվա, այլ գիշերված ժամը երենք է: Զեր երեակայությամբ արդարացրեք նման երկարաձգված դասը: Դա դժվար չէ: Ենթադրենք, վաղը ձեր բնուություն է, իսկ թերքի գործերը դեռ շատ են, այդ պատճառով էլ մենք մնացել ենք բատրունում: Այստեղից է՝ նոր հանգամանքներ ու հոգեր, ձեր տնեցները կանահանգստանան, բանի որ հերախոս չինելու պատճառով հնարավոր չէր նրանց զգուշացնել մեր աշխատանքի ձգձգման մասին: Աշակերտներից

մեկը հրավիրված էր երեկությի՝ չգնաց. մյուսը թատրոնից շատ հեռու է ապրում և զգիտի, թե առանց տրամվայի ինչպես պիտի հասնի տուն և այլն: Հավելված հորինվածքը էլի ուրիշ շատ մտքեր, ապրումներ ու տրամադրություններ է ծնուր: Այս ամենն ապրում է բնդիհանուր իրավիճակի վրա, տոնայնություն տալիս այն ամենին, ինչը պիտի կատարվի հետո: Սա վերապրումները նախապատրաստող փուլերից մեջն է: Այս հորինվածքների օգնությամբ մենք հող ենք նախապատրաստում այն էտյուտի «առաջարկող հանգամանքներ»-ի համար, որը կարելի է պարզացնել ու անվանել «Գիշերային դաս»:

Մի փոքր և կատարենք. իրականություն, այսինքն՝ այս սենյակն և այժմ ընթացող այս դասը ներքերենք մի նոր «ներ իրոք»: Թող օրվա ժամը մասանույնը՝ ցերեկիվ ժամը երեքը, բայց թող փոխվի տարվա եղանակը, ու լինի ոչ թե ձմեռ, տասնինգ աստիճան ստունամանիք, այլ գարուն՝ իհասրամէ օդով ու տաք: Տեսնո՞ւմ եք, ձեր տրանսպրությունն արդեն փոխվեց, դուք ժպտում եք հենց թեկութ այն մոր շից, որ դասից հետո ձեզ սպասում է զրոսանք քաղաքից դուրս: Ուրեմն որոշեք. յիշ ինչ եք նախաձեռնելու, արդարացներ այդ ամենը հորինվածքով, և կուտացի ձեր երեակայությունը պարզացնող նոր վարժություն:

Տալիս եմ ձեզ ևս մեկ «եթե իրոք». օրվա ժամն ու տարվա եղանակը, այս սենյակը, մեր դպրոցը, դասը մնաւմ են ասկայն այդ ամենը Սովորակից տեղափոխվում է Ղրիմ, այսինքն՝ այս օճակակի սահմաններից դուրս փոխվում է գործողության վայրը: Դժմարությունից տեղուու ծով է, ուր դուք դասից հետո լողանալու եք: Հարց է ծագում՝ ինչպես ընկար հարակ: Արդարացներ դա առաջադրին հանգամանը քենավոր թյան ինչ կարգի հորինվածքով ու գումար եք: Գույց մենք հրաւախաների նոր գնացնել Ղրիմ և այստեղ ևս չենք ըստհատել մեր լույսութեան պարապմունքների համակարգված ընթացքը: Ներմուծված «եթե իրոք»-ներին համապատասխան արդարացներ այդ կարծեցյալ կանոքի ուժիքից պահեքը, և դուք երեակայությունը վարժեցնելու առիթների մի նոր շարք կատանաք:

Ներմուծում եմ մի նոր «եթե իրոք» լուս յնձ ու ձեզ տեղափոխում ամենահետափոր իյուսիս՝ տարվա այն եղանակին. եքք պայտեղ ամբողջ օրը ցերեկի է: Ինչպես արդարացնել նման վլուարակեցումը: Թենիւու նրանով, որ մենք կինոնկարահանումների ենք և լինել այստեղ: Դա դերասանից կինոսկան մեծ համանականություն ու սպարզություն է պահանջում, քանի որ չնշնի կեղծիքն անգամ կիշացնի ժամանակներ: Բնլորդ չէ որ կվարողանարգ գերխառից խուսափել, այդ պատճառով լի ես՝ ուժիքոր, ստիպված եմ հոգ տանել ձեզ հետ դպրոցական պարապմունքներ անցկացնելու մասին: Հորինվածքներից յուրաքանչյուրը «եթե իրոք»-ի օգնությամբ ընդունելուց ու դրան հավատալուց հետո հարցեք ինքնիրդ ձեզ՝ ի՞նչ կանեն տվյալ պայմաններում: Հարցը լուծելով, դուք դրւանով խսկ կիրակեր երեակայության աշխատանքը:

Խսկ հիմա, մի նոր վարժությունում, բոլոր «առաջադրիող հանգամանքներ» մենք մտացածին կդարձնենք: Մեզ այժմ շրջապատող իրական կյանքից կթողնենք միայն այս սենյակը, այն էլ՝ մեր երեակայությամբ

խիստ փոխակերպված: Դիցուք, մենք բոլորս գիտարշավի անդամներ ենք և ինքնաթիռով հետափոր ուղևորության նոր մելքոնում: Անանցանելի թիուտների վրայով թոշելիս վթար է տոնի ունենում շարժիչը խափանվում է, և աերոպլանը հարկադրված վայրէջը է կատարում լեռնահովտում: Սերենան նորոգել է պիտոր: Այդ աշխատանքը գիտարշավը կուշացնի երկար ժամանակով: Դեռ լավ է, որ պարենի պաշար կա, ուսկան ոչ այնքան չափ: Պետք է որսորդությամբ սնուն ող հայթյալը: Բայց այդ, անհրաժեշտ է որեւ կացարան պատրաստել, կամ ակերպել ճաշ իփելու, պաշտպանության գործը, եթե բանը հասնի բնիկների կամ գավանների անսպանկալ հարձակման: Այսպես, մտովի, ձևափորվում է տագնապներով ու վտանգներով լի կյանրը: Նրա ամեն մի պահն անհրաժեշտ նպատակամնություններ է պահանջում, որոնք տրամարանորեն ու հետևողականորեն ուրվագծվում են մեր երեակայության մեջ: Պետք է հավատալ դրանց անհրաժեշտությանը: Հակառակ դեպքում՝ անուշները կդրցնեն իրմանց իմաստու ու գրագությունը:

Սակայն դերասանի տուելագործությունը նը սոսկ երեակայության սերքին աշխատանքը չէ, այլ նաև սեփական տուելագործական երազանքների արտաքին մարմնավորումը: Ուրեմն՝ իրավանություն ու դարձնեք անուշը, ինձ համար որնէ դրվագ խաղացեք գիտարշավախմբի անդամների կյանքից:

- Որտե՞ղ: Այստե՞ղ: Սալոլեսլովայի հյուրասենյակի պայմաններուն մ. - տարականսենցինք մենք:

- Ուրիշ էլ որտե՞ղ: Հօ հատուկ դեկրացիա չենք պատվիրելու: Մանաւանդ որ, հարմար նկարիչ էլ ունենք: Նա մի վայրկյանում անվճար կատարում է բոլոր պահանջները: Նա հեշտությամբ, ակնթարդորեն կարուց է հյուրանոցը, միջանցը, դահլիճն դարձնել ինչ ու զենաս: Այդ նկարիչը մեր սեփական երեակայությունն է: Միայն թե պատվեր տվեր նրան: Որոշեք՝ ինչ կանեն երեակայությանի վայրէջից հետո, եթե այս բնակարանը հովիտ լիներ, իսկ այս սենյանը՝ մեծ քար, լուսամփոփով լամպը՝ արեադարձային բույս, ապակին կախուններով շահը՝ մրգերով ծանրաբն ճյուղ, բուխարելի՝ լրված հնոց:

- Խսկ միջանցը ի՞նչ կդառնա, - հետաքրքրվեց Վյունցովը:

- Կիրծ:

- Հա՛... - ոգևորված ուրախանում էր պատանին: - Խսկ ճաշասենյակը:

- Քարայր, որտեղ, հավանաբար, նախնադարյան մարդիկ են ապրել:

- Խսկ դահլիճը:

- Բայց կրապարակ է՝ լայն հորիզոնով և որանշելի տեսարանում: Տեսօր, սենյակի բոցագույն պատերը օդի պատրանը են ստեղծում: Հետաքայում այդ կրապարակից կարելի է աերոպլանով վեր բարձրանալ:

- Խսկ հանդիսաբար ներ, - չեք հանդարտվում Վյունցովը:

- Անհատակ անդուն նդ: Այնունից, ինչպես նաև դարձավանդի կողմից, ծովից, բնիկներն ու գավանները հարձակելի չեն կարող: Ուստի պահապաններ պիտոր է կանգնեն այստեղ՝ կիրճ ներկայացնել միջանցը դռան մուտ:

- Խսկ ի՞նչ է իրենից ներկայացնում հյուրասենյակը:

- Այստեղ աերոպլանն են նորոգելու:

- Բոկ աերոպլանն ո՞ւր է:

- Ահա, - Տոքոցվը ցուց տվեց բազմոցը: - Նաև կատերների համար է, պատուհանների գարագույրները՝ թերեւ են: Լայն պարզեր դրանք: Սեղանը շարժիչն է: Նախ և առաջ պետք է շարժիչը տուոգել: Վասարաձըր լուրջ է: Այդ ընթացքում արշավախմբի մուտ անդամները թող գիշերին պատրաստություն տեսնեն: Ահա վերմակները:

- Ո՞ւր ե՞ւ:

- Սիոնցները:

- Ահա պահածոներն ու տակառիկով գինին: - Արկադի Նիկոլաևիչը մատնացուց արեց գրադարակի վրայի հաստ գրքերը և մեծ ծաղկամանը: Ուշադիր զններ սենյակը, և դուք ձեր նոր կննցաղի համար անհրաժեշտ շատ իրեր կդադար:

Աշխատանքը եռաց, և շուտով հարմարավետ հյուրածնյալում մենք սկսեցինք ապրել լեռներում կաշկանդ ված արշավախմբի խոտակյաց կյանքը: Սենք կողմուրոշվում, հարմարվում էինք այդ վիճակին:

Չի կարենի ասել, որ ես հավատում էի այդ փոխակերպմանը. ոչ, պարզապես չի նկատում այն ամեն, ինչ պետք էր տեսնել: Մենք նկատելու ժամանակ չունեինք: Սենք գործով էինք վրաղված: Հորինվածքի սուտը վարագություն էր մեր զգացողությունների, ֆիզիկական գործողությունների ու դրանց նկատմամբ հավատի ճշմարտությամբ:

Երբ մենք բավական հաջող խաղացինք առաջարկված էրսպառմանը, Արկադի Նիկոլաևիչն ասաց.

- Այս էտյուդում երևակայության աշխարհն ավելի խոր մուտք գործեց ոնազ իրականություն: Լեռնային վայրում տեղի ունեցած վթարի հորինվածքը խցկեցինք հյուրածնյալ: Սա իրեղեն աշխարհը երևակայության օգնությամբ ներքուստ քեզ համար վերափոխելու անթիվ-անհամար օրինակներից է: Այն չպետք է վանել Ըստիկակառակը, պետք է ներմուծել երևակայությամբ սահեծվող կյանքի մեջ:

Նման պրոցեսը մշտապես առկա է մեր առանձնացված իստիմ փորձերում: Եվ իրոք, վիճնական արտօներից մենք կարող ենք կազմել այն ամենը, ինչն ունակ է հորինել հեղինակի ու ռեժիսորի երևակայությունը՝ տներ, հրապարակներ, անտառներ: Ըստ որում, մենք չենք հավատում, թե վիճնական աթոռները խմբապես ծառ են կամ ծայր, սակայն հավատում ենք փոխարինող առարկաների նկատմամբ մեր վերաբերմունքին՝ իրեն դրանք իրոք ծառ են կամ ծայր:

19. p.

Դասն սկսվեց փոքրիկ նախարանով: Արկադի Նիկոլաևիչն ասաց.

- Մինչև այժմ երևակայությունը զարգացնող մեր վարժություններն այս կամ այն չափով առնչվում էին մերը մենք շրջապատող առարկաների աշխարհին (սենյակ, բուհարիկ, գուու), մերը ճշմարիտ առօրյա գործողությանը (մեր դասը): Հիմա աշխատանքը մենք շրջապատող առարկաների աշխարհից ես դուրս կերեմ ու կտնդակուի երևակայության ուսություն:

Այդտեղ մենք կգործներ նույնքան ակտիվ, սակայն միայն մտովի: Ուրիշն պոկվենք տվյալ վայրից, ժամանակից, տեղափոխվենք մենք այլ, մենք ծանոթ միջավայր և գործներ այնպես, ինչպես կորուց մենք նրեակայության հորինվածքը: Որոշեք, թե դուք ո՞ւր կուգնայիք մտովի տեղափոխվել: - Ինձ դիմելով՝ ասաց Արկադի Նիկոլաևիչը: - Ե՞րբ և որտե՞ղ պիտի կատարվի գործողությունը:

- Իմ սենյակում, երեկոյան, - ասացի:

- Շատ լավ, - հավանություն տվեց Արկադի Նիկոլաևիչը: - Զգիտեմ՝ դուք ինչպես, բայց երևակայական բնակարանում զգալու համար ինձ անհրաժեշտ կիններ սկսում մտովի բարձրանալ աստիճանով, ունեմի մաստիք դուքն առաջի կոճակը, մի խորությ մի շարք հաջորդական տրամարանական գործողություններ կատարեն: Մտածեք նաև դուքն բռնակի մասին, որը պիտի է սենյակի: Հիշեք, թե բռնակն ինչպես է դառնում, ինչպես է դուքը բացվում և ինչպես եք մտնում ձեր սենյակը:

Ի՞նչ եք մտնում ձեր առջև:

- Դիմացը՝ պահարան, լվացարան...

- Իմ ձախի՞ց:

- Բազմոց, սենյան:

- Փորձեք անցուդարձ անել սենյակում և այնտեղ ապրել ինչո՞ւ խոժովեցիք:

- Սեղանի վրայի նամակը տեսա, հիշեցի, որ դեռ չեմ պատասխանել, ամաչիցի:

- Լավ՝ Հավանաբար, դուք հիմա արդեն կարող եք ասել՝ «Ես կամ իմ սենյակում»:

- Ի՞նչ է նշանակում «Ես կամ», - հարցրեցին աշակերտները:

- «Ես կամ»-ը մեր լեզվով նշանակում է, որ ես ինձ դրել եմ հնարած պայմանների կենտրոնում, որ ես ինչ զգում եմ դրանցով շրջապատված, որ ես գտնվում եմ երևակայական կյանքի բռվում, երևակայական իրերի աշխարհում և ակտում եմ զրոձել անձամբ իմ անունից, իդակ մտոր ու պատախանատվությամբ: Այժմ ասեք, թե ի՞նչ եք ուզում անել:

- Դու պայմանավորված է նրանով, թե ճամփ բանին է հիմա:

- Տրամարանական է: Պայմանավորվենք, որ այժմ երեկոյան ժամը տասնմեկն է:

- Դու այն ժամն են, երբ բնակարանում անդորրը է տիրում, - նկատեցի ես:

- Իմ ի՞նչ կուգնայիք անել այդ անդորրում, - բաջակերում եր ինձ Տորոցդը:

- Համոզվել, որ ես ոչ թե կատակերգակ եմ, այլ ողբերգակ:

